

Հրատարակչատան կողմէ

Թորոս Թորանեանի ծննդեան ութսունամեակին առթիւ ծրագրուած ներկայ հատորը ընտրանի մըն է հեղինակին հինգ գիրքերէն՝ *Կոտրած հայելիին ընդմէջէն* (1975 Պէյրուս, արձակ էջեր, Սեւան տպարան, 144 էջ), *Բարեւ հայրիկ* (1993 Երեւան, նովէլներ, Ապոլոն հրատարակչութիւն, 144 էջ), *Բոլորն ալ մարդեր են* (1993 Հալէպ, պատմուածքներ, 164 էջ), *Կեանքի կեումաններով* (1999 Հալէպ, պատմուածքներ, 116 էջ), *Մանրապատումներ* (2002 Հալէպ, պատմուածքներ, 144 էջ):

Ներկայ հրատարակութեան մէջ, հաւատարիմ մնալով հանդերձ բնագրին, առհասարակ միօրինակութիւնը ապահովելու համար կատարած ենք որոշ ձեւային փոփոխութիւններ: Մեր ներմուծումները նշած ենք անկիւնաւոր փակագծերով, կարգ մը բառերն ու նախադասութիւններն ալ աստղանշելով կամ թուանշելով ծանօթագրած ենք պատմուածքներու վերջաւորութեան:

Յաւելուածի բաժնին մէջ տուած ենք Թորանեանի ինքնակենսագրականը, ինչպէս նաեւ իր գրական, հրատարակչական, խմբագրական ու թարգմանական բեղուն գործունէութեան մատենագիտութիւնը:

*

Երկար ու առողջ կեանք կը մաղթենք սիրելի «վարպետ»ին, որուն սրտանց բաժնած «թթխմոր»ը անսպառ եղաւ միշտ, եւ որու շնորհիւ գրական անդաստանը լեցունեցաւ ոչ միայն իր՝ այլեւ զանազաններու թխած «հաց»երու բուրմունքով:

Հրատարակութեան ու խմբագրութեան վերաբերեալ

ጸ-ጸ-ኮሆሆ ስሪ

Արաս Հրատարակչություն
A r a s Y a y ı n c ı l ı k

İstiklal Caddesi, Hıdivyal Palas 231/Z
34070 Tünel, Beyoğlu-İstanbul
Tel: (90) 212.252 65 18 - 243 06 02
Fax: (90) 212.252 65 19
www.arasyayincilik.com
info@arasyayincilik.com

ARAS - ԱՐԱՍ 105

Թ-Թ-ԽՄՈՐ
Ը Ն Տ Ր Ա Ն Ի
(պապմունածքներ)

Թ-ՈՐՈՍ Թ-ՈՐԱՆԵԱՆ

Հրատարակչության Պատրաստեց
Արտաշէս Մարկոսեան

Կողքի Պատրաստութիւն
Մեհմետ Սինան Նիյազիօղլու

Կողքի Լուսանկար
Մեսրոպեան վարժարանի աշակերտներ
(Հալէպ՝ 1920-ականներ)

Տպագրութիւն
Սէնա Օֆսէթ


Ապրիլ 2009 Ստանպուլ

ISBN 978-605-5753-05-4

Թ-Թ-ԽՄ ՈՐ

Թ-ՈՐՈՍ Թ-ՈՐԱՆԵԱՆ





Լ.ՌԻՍԱՆՅԱՆ, Թ.Ա.ՄԱՐ ԿԱԼՃԸ, Հալէպ, 8 Փետրուար 2009

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ
(ծն. 1928)

ጡጡ-ኮሆስቲ

**ԿՈՏՐԱԾ ՆԱՅԵԼԻՒՆ
ԸՆԴՄԷՋԷՆ**

ՊՈԼՍԵՑԻ ԽԱՉԻԿԸ

Կորսնցուցած էր համրանքը:

Քանիբերօրդ վէճն էր ասիկա կնոջը հետ: Ինք Հայաստան պիտի երթար, Հայրենիք պիտի հաստատուէր: Ինք թքեր էր ամերիկեան իր ինքնաշարժին, Քաբալը Չարշըյին մէջ գտնուող առեւտրական իր ձեռնարկին վրայ: Առեւտրական ձեռնաօրկ: Ինք գրող մարդ էր: Միթէ՞ իր հոգին պիտի այսպէս խեղդուած պահէր փերեզակի սա ապակիներու ետին ու յետոյ... յետոյ ի՞նչ, ա՛լ ձանձրոյթը թոյնի վերածուած էր իր արեան մէջ, իր հիւսուածքներուն մէջ, ու կը սպառնար ուղեղին ամէն ժամ, ամէն վայրկեան:

Ո՛չ, անտանելի էր: Իր որոշումը վերջնական էր, վերջնական: Պիտի մեկնէր Հայրենիք:

— Թագուկ, ճանս, սա մեր կեանքին վերջալոյսը թող քիչ մը լուսաւոր ըլլայ: Ամբողջ մեր կեանքը, գրեթէ յիսուն

տարի Պոլսոյ մէջ անցաւ. մնացեալ կտոր մը արեւն ալ Երեւանի մէջ տեսնենք:

— Ի՞նչ եղեր է Պոլսոյ: Անուշնով ալ գրող ես: Կարծես կարդացած չես Պոլսոյ գովքը Հիւսոզ ծով մը գրականութիւնը: Կարծես ապրած չըլլայիր այս քաղաքին մէջ: Չեմ հասկնար ինչէ՛ն դժգոհ ես. տուն ու տեղդ մարդավարի, խանութիւն գործը լաւ, օթոն ոտքիդ տակը, բնութեան գեղեցկութիւնները... կը հասկնամ, կը հասկնամ ինձմէ՛ գաւակ չունեցար, այդ է պատճառը, նախկին ամուսինէս բերած Վարդանս ալ մարդու տեղ չես դներ, քեզմէ՛ չէ...:

Ու սկսաւ հեծկլտալ Թագուկ:

— Գիտեմ, չես սիրեր զիս, ահա միակ պատճառը Պոլիսէն զգուելուդ, ուրիշ հեքեաթներ լսել չեմ ուզեր:

— Սիրելիս, այս քանի տարի է որ կը վիճինք: Ո՛վ ըսաւ թէ Վարդանը չեմ սիրեր: Դուն ալ գիտես թէ քու Վարդանիդ համար հոգի կու տամ, նուէրներու լաւագոյնը կը բերեմ իրեն, պտոյտներու կը տանիմ զինք, մեր ամուսնական կեանքի տասնհինգ տարիներու ընթացքին ոչ մէկ օր զգալ տուած եմ թէ ինք որք է. արդէն երիտասարդ է Վարդան, իր 18-ին մէջն է, մէյ մը հարցուր տեսնեմ թէ ինձմէ՛ դժգոհուցիւն ունի՞ր...:

— Չեմ գիտեր, դուն զիս չես սիրեր: Այս մեր հանգիստ կեանքը ձգելով կ'ուզես Հայաստան մեկնիլ: Ի՞նչդ պակաս է, ըսէ, ի՞նչդ պակաս է:

— Ճանս, քեզի հազար անգամ ըսած եմ թէ ինձի պակասողը դրամը չէ, վայելքները չեն, քաղաքին բնական գեղեցկութիւնները չեն, ինձի պակասողը հայրենական հողն է, հայկական մթնոլորտը, որ հետզհետէ կը պակսի սա երբեմնի հայակեզրոնին մէջ:

— Ի՞նչ, հայկական մթնոլորտ կը պակսի Պոլսոյ մէջ. եկեղեցիները իրենց տեղն են, դպրոցները իրենց տեղն են, երգչախումբեր, թատերախումբեր, գրական երեկոներ.

ի՞նչն է քեզի պակասողը. մեր այնքան թանկագին գրողներուն աճիւններն անգամ այստեղ են, Դուրեան, Մեծարենց, Զարիֆեան, ո՞ր մէկը թուեմ...

—Օդ չկայ ո՞ր, թթուածին չկայ: Քեզի հազար անգամ ըսած եմ ու ալ կրկնելու պէտքը չեմ զգար: Շուտով կը մեկնիմ Հայրենիք, քեզի կը թողում օթօ, վայելքներ, տուն, տեղ ու փերեզակութեան մեր կեդրոնը ի Քաբայլը Չարչը, ամէն ինչ քեզի թող պատկանի ու Վարդանին. աչք չունիմ ձեր վայելքներուն վրայ, իմ վայելքս հոն պիտի ըլլայ՝ Արարատի փէշերուն...

—Կատարեալ խենթ մըն ես:

—Այո՛, խենթ եմ ու պիտի մեկնիմ:

—Մեկնիր, որո՞ւ հոգը:

—Այսօ՛ր իսկ կը մեկնիմ:

—Բայց դուն խիղճ չունիս, իմին խելօք խաչիկս, ուրեմն սո՞ւտ էին ինծի այսքան տարի շուսլած խօսքերդ. վա՛յ, վա՛յ, չեմ հաւատար ականջներուս, ուրեմն երբեք չես սիրած զիս, հապա ի՞նչպէս մէկ օրէն միւսը կը լքես զիս, կը մոռնաս տասնհինգ տարուան կեանք ու կը մեկնիս որպէս թէ ապրած չըլլայիր այս քաղաքին մէջ, ապրած չըլլայիր ինծի հետ, երիտասարդ տարիներս քեզի տուած չըլլայի երբեւէ: Ի՞նչպէս կը մոռնաս այս բոլորը, ըսէ՛ ինչպէ՛ս: Բայց չեմ հաւատար, դուն իմ խելօքիկ խաչիկս ես, այստեղ կը մնաս, կ'ապրինք միասին, ու մեր կեանքին վերջալոյսը Վոսփորի գոյները կ'ունենայ, ինչպէս անցնող տարիներուն: Ո՛չ, ո՛չ, դուն չես լքեր զիս...

—Ես չեմ լքեր քեզ, այո՛, միասին կը տանիմ: Ամէն ինչ կը ծախենք ու Վարդանն ալ միասին առած կը մեկնինք Հայրենիք: Ի՞նչպէս կրնամ մոռնալ մեր միասին անցուցած տարիները. չէ՞ որ միշտ ալ կրկնած եմ թէ միասին պէտք է երթանք: Ես քեզմէ չէ՞ որ կը փախչիմ, սիրելիս, ես կ'ուզեմ որ մեր Հայրենիքին միանանք երեքս մէկ:

—Անկարելի է քեզ տարհամոզել: Տարօրինակ մարդ ես: Վերջին հայրենասէրը բովանդակ իսթանպուլի մէջ: Գոնէ որպէս զբօսաշրջիկ գնա՛, գնա՛ դիտէ, տես, եթէ յարմար է նոր միայն որոշէ, որոշենք վերջնական փոխադրուիլ:

—Վերջապէ՛ս, վերջապէս զիջում ցոյց տուիր մեր հայրենիքին նկատմամբ: Զբօսաշրջիկ երթալ... մարդ իր հայրենիքը որպէս զբօսաշրջիկ պիտի երթայ: Բայց որովհետեւ կը սիրեմ քեզ, կը սիրեմ նաեւ Վարդանը, թող այդպէս ըլլայ, կ'երթամ որպէս զբօսաշրջիկ:

Խաչիկին անցագիրը պատրաստ էր արդէն: Իսթանպուլը Երեւանին կապող ուղիդ գիծ մը չկար: Իր առաջին հանգրուանը Պէյրութը պիտի ըլլար:

Մեկնումի նախօրեակին յուզումնառատ օր մը ապրեցաւ Խաչիկ: Սկիւտարէն իջաւ եւրոպական ափ: Դիտեց ծանօթ ծովը, դիտեց ճամբորդները տարաշխարհիկ երեւոյթով մը: Իջաւ Բերա, հանդիպեցաւ մի քանի բարեկամներու, հանդիպեցաւ Սուրբ Երրորդութիւն եկեղեցին, վար իջաւ եւ հանդիպեցաւ Թիւնէլ, դարձեալ իջաւ ծովափ, Մեծ Կղզին կը քաշէր գինք, Պէօյի՛ւկ Ատա, երիտասարդութիւն մը անցուցած էր այստեղ, այս ձիակառքերու կղզիին մէջ, ուր արեւեկքն ու արեւմուտքը զիրար գրկած կ'ապրին, ուր ափ մը ցամաքը ծովը գրկած կ'ապրի, ուր ծովը ցամաքին փաթթուած կ'ապրի:

Վերադարձ, Տօլմապահչէ, Կեդրոնական դպրոց, բարեկներ ծանօթներու... ուշ ատեն հասաւ Քաբալը Չարշը, երբ իրենց խանութը փակուած էր արդէն, քիչ մը պտտեցաւ էմին Էօնիւի հրապարակին վրայ, բարձրացաւ “Կիկոյի կամուրջը” դէպի, դիտեց անցորդները, դիտեց երեկոն, ապրեցաւ երեկոն ու երբ աստղերը ցերեկուան տապէն յոգնած իջան ծով ու պսպղացուցին ծովը, Խաչիկ մտածեց ուրիշ ծովակի մը մասին ու քայլերն ուղղեց դէպի տուն...

Մէկ օրուան մէջ յիսուն տարի ապրած էր Խաչիկ:

Խաչիկ օգանաւէն չգիտեց կորսուող քաղաքը: Իր խոհե-
րուն հետ էր: Ի՞նչ էր իր կորսնցուցածը: Անցեա՞լ մը:
Բայց անցեալը իր հետն էր: Ինք կ'երթար Հայրենիք մը շա-
հելու: Ի՞նչ էր իր կորսնցուցածը, կին ու իր կնոջմէն եկող
զաւակ մը, բայց անոնք ալ կրնային գալ, միանալ իրեն,
պիտի գային, ինք պիտի գրէր անոնց, պիտի համոզէր: Հայ-
րենիքէն աւելի անոյշ ինչ կար աշխարհիս վրայ:

Չհասկցաւ թէ օգանաւը երբ հասաւ Պէյրութ: Անմիջա-
պէս ուղղուեցաւ դէպի ելքի դուռը: Սպասելու պէտք չու-
նէր, իր հտեւէն վալիզներու պոչ մը կախած չէր. ամբողջ
ունեցածը ձեռքի պայուսակ մըն էր:

Մաքսի պաշտօնեան էր.

— Պարո՛ն, ձեր պայուսակները:

— Թուրիսթ եմ, առանց պայուսակի թուրիսթ: Եթէ բանի
մը պէտք ունենամ, ձեր երկրէն կ'առնեմ:

— Թող ամէն օր գան ձեզի պէս թուրիսթները:

Խաչիկ ամիս մը մնաց Պէյրութի մէջ: Այստեղ գտաւ հին
ծանօթներ, որոնք փորձեցին զինք համոզել՝ հաստատուիլ
Պէյրութ. կինն ու զաւակը բերել Լիբանան եւ ապրիլ
առեւտուրի այս սքանչելի երկրին մէջ: Ի՞նչ պէտք կար
Հայաստան երթալու: Եթէ շատ կը փափաքէր, թո՛ղ երթար
թուրիսթ:

Իր որոշումին մասին ո՛չ ոքի խօսեցաւ Խաչիկ: Լսեց
աջէն խօսողները, ձախէն խօսողները, «Ամերիկա գնա՛»
ըսողները, «Պէյրութ հաստատուէ՛» բարեխօսողները, բայց
երբ վերջացուց իր վիզայի գործողութիւնները, ալ համ-
բերութիւնը սպառած էր:

Հանրապետական Թուրքիոյ անցագիրով Հայրենիք կը
մեկնէր Խաչիկ: Մէկ ամիս մնացած էր Պէյրութ, բայց այս

քաղաքէն ոչինչ կը յիշէր, ոչի՛նչ. միայն քանի մը բարեկամներ տեղ գրաւած էին իր մտքին մէջ:

Հիմա ինք օդանաւին մէջն էր: Հայրենիք փոխադրող օդանաւը իրեն կը թուէր հրեշտակի թեւեր ունեցող հսկայ թռչուն: Ինք առանձին էր, բոլորովին առանձին. ո՛չ մէկ բեռ ունէր իր հետ, նոյնիսկ չէր մտածած ձեռք մը հագուստ գնել Պէյրուսթէն, քանի մը շապիկ վերցնել. ինք Հայրենիք կ'երթար, պիտի ապրէր այնպէս ինչպէս կ'ապրէին իր եղբայրները, այդքան:

Վայրէջք Արարատեան դաշտին վրայ: Մասիսներու սրբազան վեղարները... մշուշ, երազ եւ իրականութիւն... Սա Հայրենի հողն է:

Օդակայանին մէջ ինչիկ մնաց ամբողջ չորս ժամ: Այդքան տեւեց փերեզակներու գոյքերուն քննարկումը: Մարդիկ կային որոնք կը հայհոյէին, կը դժգոհէին, վայրկեան առաջ դուրս ելլել կ'ուզէին:

Չորս ժամ դիմանալը դիւրին չէ: Պէյրուսթ-Երեւան օդուղին աւելի կարճ ժամանակէն կարելի է նուաճել քան Երեւանի օդանաւակայանէն Երեւան 15 բոպէնոց ճամբան: Բայց ինչիկ չիմացաւ այդ բոլորը: Ինք իր երազին հետ էր, իր երազին հասած էր:

Արմենիա հիւրանոց:

Առաւօտեան իր առաջին գործը եղաւ դիմումագիր մը ներկայացնել Հայաստանի քաղաքացի ըլլալու կապակցութեամբ:

Նոր ծանօթներ ունեցաւ: Օգնեցին իրեն: Այս Հայր տարօրինակ մէկն էր, երկընտրանքը անծանօթ էր իրեն, ինք որոշումով մը եկած էր:

Դիւրին չեղաւ իր քաղաքացի ընդունուելը, գրեթէ տա-

րի մը տեւեց: Պակսեցաւ իրեն դրամը, պակսեցաւ հանգիստը, բայց իր որոշումը մնաց անաղարտ: Ամէն տեղ սիրալիր չեղան իրեն հետ, ամէն մարդ չհասկեցաւ զինք, բայց ինք աշխատեցաւ հասկնալ մարդերը իր երկրին. զինք հասկցողներու ալ հանդիպեցաւ ու վերջապէս օրին մէկը ունեցաւ իր մէկ սենեակնոց բնակարանը:

Պատշգամէն կ'երեւէին զոյգ Մասիսներն ու Արագածը: Իր բարեկամները քոնեաքի սեղանի մը հրաւիրեց ու այդ գիշեր լացաւ ուրախութենէն:

Այդ մէկ տարին...

Հիւսուածեղէնի ֆապրիքի մագոզները այնպիսի կանոնաւորութեամբ չաշխատեցան որքան կանոնաւորութեամբ ընթացաւ նամակները Երեւան-Իսթանպուլ, Իսթանպուլ-Երեւան:

«Սիրելի՛ս, հոգեա՛կս, կապո՛յտ թռչունս իմին, թռի՛ր, ու թեւերուդ վրայ Վարդանը՝ եկուր Հայրենիք...: Շո՛ւտ եկուր: Ես արդէն բնակարան ստացած եմ, կ'աշխատիմ, եկուր, լաւ կ'ըլլանք»:

Ու կու գար պատասխանը.

«Դուն զիս խաբեցիր, դուն փախար ինձմէ, դուն խօսք տուիր մեկնիլ որպէս զբօսաշրջիկ, քննել երկրին պայմանները ու մեզ տեղեակ պահել որպէսզի միասին որոշում առնէինք...»

Ինչո՞ւ կը դժբախտացնես մեզ, ինչո՞ւ. չէ՞ որ մենք որեւէ վատութիւն չենք գործած քեզի հանդէպ:

Վերադարձի՛ր, սիրելիս, վե՛րջ տուր այս չար կատակին: Հայրենիք է, ես ալ համաձայն եմ քեզի հետ. հայրենիք է, գացիր տեսար, արդէն տարի մըն ալ մնացիր այդտեղ, վայելեցիր, վերադարձի՛ր...»

Ու այսպէս, տարին միայն մէկ, բայց նամակները տասնեակ ու տասնեակ գացին ու եկան տիրութիւն ծրարած իրենց տողերուն մէջ, արցունք ծրարած, կարծրութիւն,